

ՊԱՏՍԱՎ - ԲԱՆԱՄԻՐԱԿԱՆ

ԱՐՓԵՆԻԿ ՂԱԶԱՐՈՍՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու

ՄՇՈ ԱՌԱՋԵԼՈՅ ՎԱՆՔԻ ԳՐՉՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԸ

Տարոնի համբավավոր այս վաճռք կառուցվել է Տիրիմկատար կամ Տիրիմկատար լեռան ստորոտում և նվիրված է եղել Տամերկու Առաքյալներին: Մշո Ս. Առաքելոց վաճռք մատնազրական աղբյուրներում հիշվում է նաև Եղիազարու (Ղազարու) և Թարգմանչաց անուններով: Վաճքի հիմնումը ավանդաբար կապվում է Գրիգոր Լուսավորչի անվան թեու: 312 թ. ավարտելով տաճարի շինությունը, Ս. Գրիգորը կատարել է հիմնարկեքը և առաջնորդ կարգել Եղիազարին՝ պատեղից էլ վաճքի առավել հայտնի անվանումը¹: 19-րդ դարի վերջին լուսավորչան շինություններից ոչինչ չի մնացել, միայն հնագույն կառուց-ների հետքեր են նկատվել պարսպից դուրս, արևմտյան կողմուն²:

Համալիրի զլասավոր եկեղեցին նվիրված է եղել Առաքյալներին: 1279 թ. այստեղ ընդօրինակված ժողովածուն գրվել է «... ի հոչակատը և յակամաւոր Սուրբ ովասն Եղիազարու... ընդ հովանեաւ Պողոսի, Պետրոսի և Անդրեյի»³:

Սուրբ Առաքելոցը պետք է որ կառուցված լինի մինչև եկեղեցու համար փայտյա դուռ պատրաստելը, այսինքն մինչև 1134 թ.: Դուան արձանագրությունը միակ թվազիր վկայությունն է: 1134 թ. տաճարի հիմնադրման տարեթիվը չէ, այլ ամբողջ համալիրի նորոգումը սկսելու թվականը: Այս նույն նորոգման ժամանակ են կանգնեցվել Թարգմանչաց գերեզմանցի ԾՂԳ(1134) և ԾՂԴ(1135) թվականների արձանագրություն ունեցող խաչքարերը: Նորոգումն ավարտվել է 1135 թվականին, այդ մասին գրված է եղել Տեր Ղազարի և Ստեփանոսի խաչքարին⁴:

Ուստիմնահրողների վկայությամբ, համալիրի մաս է կազմել մի ժամատում՝ Ս. Գրիգոր Լուսավորչ անունով, որ կառուցել է Կարապետ Բաղիշեցին 1555 թ.: Ժամատնից բացի, Ս. Առաքելոցին կից եղել են երկու մատուռ, հարավից՝ Ս. Ստեփաննոս, հյուսիսից՝ Ս. Գեվորգ, համալիրից դուրս եղել է Ս. Աստվածածին եկեղեցին⁵, որի հովանու ներքո մեր գրիչները ընդորինակել կամ նորոգել են ձեռագրեր:

Մշո Ս. Առաքելոց վաճռք նորոգվել է քանից, 1609 թ. Բարսեղ Վարդապետը նաև պարսպապատում է վաճռքը⁶: Վերջին նորոգման ժամանակ՝ 1791 թ., կառուցվել է զանգա-

¹ Ն. Սարգսյան, Տեղագրութիւնը ի Փոքր և Մեծ Հայք, Վենետիկ, 1864, լ. 231: Ռ. Ռուկան, Տարօն-Տորութիւնի վաերերը, Վիեննա, 1953, լ. 23-24:

² Ն. Սարգսյան, նշվ. աշխ., լ. 232:

³ Մարգևնատարան, ձևո. 5595, լ. 228ր: Հմմդ. Հայերն ծնուազրերի հիշարտակարաններ, ԺԳ դար, կազմնց՝ Ա. Մարգևնատար, Երևան, 1984, Հայուհեն՝ ԺԳ դարի հիշարտակարաններ:

⁴ Այդամակ խաչքար 1. կանգնեցված լուսի նաև Նավիթ Անհարժի գերեզմաններ: Ռ. Ռուկան, նշվ. աշխ., լ. 32:

⁵ Ն. Սարգսյան, նշվ. աշխ., լ. 234: Ռ. Ռուկան, նշվ. աշխ., լ. 31:

⁶ Հայերն ծնուազրի հիշարտակարաններ, ԺԵ դար, կազմնց՝ Վ. Նավորյան, Ա. Ռովհաննիսյան, Երևան, 1975, լ. 390: Այսուհետև՝ ԺԵ դարի հիշարտակարաններ, մ. Ա:

կատունը, նորոգվել զավիթը, ավելացվել են միաբանական խցերն ու տնտեսական շինությունները: Զայնեն դիս Հովհաննեսի չափած հիշատակարանը թերևս միակ թվագիր արձանագրությունն է, որ եղել է համալիրի կառույցների վրա⁷:

Հայոց գրերի զբություն հետո այստեղ եղել է թարգմանչաց դպրոց, որը, համաձայն ավանդության, ղեկավարել է Դավիթ Անհայթը:

Ս. Ղազար վաճքը հիշվում է նաև Վարդանանց շրջանում, Շուշանիկի վարքի Հայսմավորքյան տարբերակում: Ամուսնու ուրանալուց հետո, օրան պատկանող և Ս. Նունեից ավանդված խաչը Շուշանիկը Անդրեաս վանականի հետ ուղարկում է հայունական տիրույթ, իր սրբակրոն վարքով հայտնի Մշո Ս. Առաքելոց վաճք⁸:

11-րդ դարում այս վաճքը դեռևս Մամիկոնյան իշխանական տիրույթների մեջ էր մտնում: Չորտուանել Մամիկոնյանը 1179 թ. թարգմանում է Ս. Առաքելոցի սահմանների մասին Գրիգոր Լուսավորչին վերագրող կտակագիրը, որի համար ասվում է, թե այն գրված է եղել հումարենով. «Ես՝ Չորտուանել Մամիկոննեան, որդի Տաճատա մեծի իշխան Տարանոյ... տեսի այս Գրիս սահմանաց գրել հելլեէն և լոյն գրով ի... Սրբոյն Գրիգորէ Պարթևէ և թարգմանեցի ի հայ գիրս և հաստատեցի, զի մնացական հայունիս լիցի Սուլր Առաքելոցն»: Մամիկոնյան իշխանական տաճ իրավունքները փաստացի հաստատելուց հետո, իշխանը Ս. Ղազարու վաճքին է նվիրում իր ծննդավայրը՝ Մշո Բերդակ գյուղը, որի մասին ընդարձակ հրամանագիրը պահպանվել է Մշո Շառընտիրում⁹:

Այս նույն հարուստ հոչակավոր այս միաբանությունում առանձնանում է Պողոս վարդապետ Տարոնացին, որը դավանաբանական բնույթի թղթակցություն է ունեցել Թեոփիստե հովան իմաստանուի հետ¹⁰:

Առաքելոց վաճքի միաբանության հոգևոր և մշակութային գրոծունեությունը շարունակվում է նաև հաջորդ դարերում: Վաճքի պատմության շարադրման առումով խիստ կարևորվում է մի շատ հետաքրքիր ձեռագիր, որը դարեր շարունակ պահվել է այս վաճքում, որի բաց, չգրված թերթերը լուսավել են վաճքի միաբանական գրոծունեության առանձին դրվագները արձանագրող հիշատակարաններով: Խոսքը բանահրության մեջ հայտնի Մշո Տոնականի կամ Շառընտիրի մասին է: Տոնական՝ Սողոմոն Մաքենացու ինքնագրից սերվող այս Շառընտիրը ոչ միայն արժելորում է իր մեծության, գրանցութի, օրան մեջ պարունակվող նյութերի առումով, այլև դրանում եղած հիշատակարաններով, որոնցից ոչ մեկը չի վերաբերում գրչության վայրին և թվականին:

Զետագիրը հայտնվել է Վաճքում 1205 թ. առանց զիսավոր հիշատակարանի և կազմի: Կազմելուց առաջ գրվել է ձեռագրի անցած փորձությունների, գերության ու ետզնման պատմություն-հիշատակարանը: Մշո Ս. Առաքելոց վաճքի միաբանների և Մշո դաշտի բնակչության միջոցներով Խլաթում գննվում է այս ամզին ձեռագիրը և տրվում Եղիազարու վաճքին ի պահ¹¹:

⁷ «Արքապ», 1909 թ., լու 983-984: Ռ. Ռուկան, եղվ. աշխ., լու 27:

⁸ Հ. Ռուկան, եղվ. աշխ., լու 45:

⁹ Հայերն ծեռագրիքի հիշատակարաններ, Ե-ԺԲ դո., կազմեց Ա. Մաթևոսյանը, Երևան, 1988, լու 111-112:

¹⁰ Ռ. Տաշյան, Ցուցակ ծեռագրաց մաքրենադարանին Միհիթրենանց ի Վինենա, Վինենա, 1895, լու 767-769:

¹¹ Ա. Մաթևոսյան, Երք և որդին Ի. գրվել Մշո Տօնական-Ծառընդիրը, «Բանքը Մաքրենադարանի», թիվ 9,

Նման մեծ ձեռագիրը կազմելով բավականին դժվար գործ էր: Դիա համար պահանջվում էր մեծ վարպետություն և փորձ: Դա հնարավոր էր միայն գրչական մեծ ավանդույթներ ունեցող գրչակենտրոնում, որ ոչ միայն ձեռագիր էին ընդօրինակում, այլև ուսուցանում գործ, Ակարազարդել և կազմել:

Կազմողի 1205 թ. հիշատակարանում հպանցիկ վկայություններ կան վարդապետարանի գործունեության մասին: Արև դրանք Խլաթ ձեռագիրը թերելու մեկնող վեց միաբաններից հինգը փիլիխոփաններ են՝ Հուափիը, Ռատականը, Ավետիքը, Ստեփանոսն ու Ներսեսը, որոնց ամունները գրվել են «ի դպրութիւն կենաց»: Հանգանակության մասնակիցների թվում հիշվում են մեկ այլ փիլիխոփան՝ «քարեպաշտ Խաչատորը», և «մեծանուն Տէր Բարսեղը», որի մոտ սովորել է միաբանության առաջնորդ Արքահամը: Եվ վերջապես, կազմող Ներսեսին օգնել է Հովհաննես փիլիխոփան՝ այս հիշատակարանը ավարտին հասցելով¹²:

Այսպիսի հոչակավոր, սրբակրոն բարքերով հայտնի վաճքում է կրթվել և Ներսես Մշեցի վարդապետը. «Սա էր ի զատաւեն Տարօնոյ... սմեալ և Վարժեալ էր ի հոչակատը վանս Ղազարու, որ է Մշոք Սուրբ Սունաքեալը», - կարդում ենք Հայամավորքի նրա վարքում: Մշեցին այստեղ ատանում է փալլուն կրթություն:

Մշոք Առաքելոց վաճքից Ներսես Մշեցին գնում է Խորվիրապ՝ Վարդան Արևելցու մոտ, աշակերտում հրան և դատանում հրա գործի շարունակողը: Վարդան Արևելցու մահից հետո (1217 թ.) վարդապետարանը գրկվում է հովանավորներից, և հրա նոր բարունապետը՝ Ներսես Մշեցին, ստիպված է լինում Հայոց վարդապետարանը տեղափոխել հայրենի գավառ, իր դպրանոց՝ Տարոնի Մշոք Ս. Առաքելոց վանքը:

Արև այս շրջանից են Եղիազարի վաճքից մեզ հասած առաջին ձեռագրերը: Առաջինը՝ 1275 թ. ընդօրինակված Փիլոնի Հազարատյանի Լուծմունքն է: Ձեռագրի ընդօրինակմանը մասնակցել են երկու գրիչ: Լուծմունքը սկսել է ընդօրինակել Գրիգոր Վարդապետն իր ուսուցչի՝ «... յամենից վեր երանելին հայրն հասարակաց...» Ներսես վարդապետի պատվերով: Ակսած 234 թերթից՝ գործը շարունակել է վարդապետի մեկ այլ աշակերտը՝ Բարսեղը, և ավարտել այն «...ի թուականն Հայոց Զի՞դ (1275) և բնակութիւն տեղի Ղազարու վաճք...»¹³:

«Ծառք Բարսեղի Կեսարացոյ» ժողովածուն ևս գրվել է Ներսես Մշեցու պատվերով: Ձեռագիրը սկսում է Ստեփանոս գրիչը և ավարտում է Եսայի Նշեցին: Այդ մասին կան հիշատակարանային վկայություններ ձեռագրի 107թ և 400ա-թ էջերում: Սա Եսայի Նշեցու ընդօրինակմամբ մեզ հասած առաջին գործն է: Բացի դրանից, ինքնագիր է նաև ստացողի՝ Ներսես Մշեցու հիշատակարանը. «Ի 2ԺԸ (1279) գրեցաւ... յուսում խրատու կարգաւորութեան վանականաց... ի հոչակատը յականատոր զսուրբ ուխտու Եղիազարու... մեծաւ հոգաբարձութեամբ իմոյ անպիտանութեամ»՝ Ներսեսի վարդապետի»¹⁴:

Ուսումնասիրողները Եղիազարի վաճքում գրված են համարում նաև Լուսեր գրի 1280 թ.

Երևան, 1969, լ. 138:

¹² ԺԳ-դարի հիշատակարաններ, լ. 46-47:

¹³ Մագիստրատական, ձևո. 3932, լ. 9 128ա; 329թ: Հմմդ. ԺԳ-դարի հիշատակարաններ, լ. 459:

¹⁴ Նոյն վերում, ձևո. 5595, 228թ: Նոյն վերում, լ. 490:

ընդորինակած Եզմիկ Կողբացու «Եղծ Աղանդոց»¹⁵: Այն գրվել է «սուրբ և ամենագորով վարդապետն Ներսեսի» պատվերով: Աշխատանքը սրբագրել է և ձեռագրի վերջուն Դատավորաց Մեկնությունից մի հատված է ընդորինակել Եսայի Նչեցին. «Զապատճեալսդ այս մատեմի աղաչեմ իշեկ յաղաւթ, զատացադ սորին զմեծ հոնսորն Ներսէս, նոյնաւս և զնուաստ հոգի Եսայի՝ հետևող և աշակերտ սուրբ առնն Աստուծոյ՝ Ներսէսի վարդապետի»¹⁶:

Հենց այստեղ՝ Ս. Առաքելոց վաճռում Մշեցին մտածում էր ավելի լայն կրթական համակարգ ստեղծելու մասին, որը վագծում էր ապագա համալսարանական կրթության ծրագիրը¹⁷:

Հոչակավոր վարդապետի պահանջով ոչ միայն տեղում էին ընդորինակություններ կատարվում, այլև ձեռագրեր էին գրվում այլ վայրերում: Նշանավոր գրիչները կատարյալ օրինակներից էին կատարում իրենց ընդորինակությունները, որոնք անհրաժեշտ էին Մշեցու դպրոցի համար որպես ուսումնական ձեռնարկներ: Վարդապետը այս նոր կարևոր ձեռնարկ-ձեռագրերով հարստացնում էր նաև տեղի Մատենադարանը:

Այդպիսի մի ձեռագիր է Դավիթ Քոբայրեցու ինքնագրից ընդորինակված «Մեկնութիւն Եսայեա մարգարէի» ժողովածուն: Ձեռագիրը բերվում է Հայրատի վանքից և Գուգարաց աշխարհի մեկ այլ վաճռում Մաշկավանքում «աստուծազարդ րաբունոյն և ամյադր վարժապետին Ներսէսի» պատվերով Բարսեղ գրիչը 1281 թ. հունիսի 19-ին սկսում և օգոստոսի 31 ավարտում է այն:

Ներսէս Մշեցու ավագ աշակերտներից է Բարսեղ գրիչը, որը սպասավորում էր արդեն այս վաճռում: Նա Մշո Առաքելոց վանքի մեզ հասած առաջին ձեռագիր՝ 1275 թ. ընդորինակված Փիլինի Հնգամատոյանի մեկնության երկրորդ գրիչն է:

Մաշկավանքում ընդորինակված այս ձեռագրի հիշատակարանը հետաքրքիր տեղեկություններ է պարունակում Ներսէս Մշեցու վարդապետարանի գործունեության մասին: Նախ իմանում ենք, որ Ներսէս վարժապետը Մաշկավանք է ուղարկել իր մեկ այլ աշակերտին, որը դասասաց վարդապետ էր՝ Հովհաննես Ռաբունուն: Մշեցին նամակով խղնդրում է հմուտ Բարսեղ գրչին այլ գործեր էլ օրինակել «...և զայլ բագումս գծագրել... ի շահ և յազուտ իրոյ անձինն և նորին աշակերտոցն...»:

Հովհաննեսն ինքն է գնացել Հայրատ, տեղի առաջնորդ Հովհաննեսն արքեպիսկոպոսից ստացել զաղափար ինքնագիր օրինակը և բերել Մաշկավանք: Բարսեղ գրիչը վաղուց է հեռացած եղել Ս. Առաքելոց վանքից և Եսայի Նչեցուն հիշում է մանուկ հասակից ու թեև նրան անվանում է Մշեցու գործի շարունակող՝ «...գիտեսնողս սորին», անմիշապես ավելացնում է. «զտիսա և զպարզամիտ պատանին Եսայի...»¹⁸: Եսայի Նչեցին վաղուց

¹⁵ ԺԳ դարի հիշապակարաններ, լ. 9 498, թթ. 2: Ս. Արքաշարյան, Ա. Մաթենոսյան, նշվ. աշխ., լ. 9: Ա. Ղազարյան, Ցանկ Գանձորի համապատասից մնաց հասած ձեռագրերի, «Էջմանձին», 1984, ԺԱ-ԺԲ, լ. 9 57:

¹⁶ Նոյն վելուում, ձեռ. 109, լ. 9 ճր: Նոյն վելուում, լ. 9 498: Նշեցու ընդորինակությունը գրադաւում է. ձևասպիր 315ա-320թ լուրքը:

¹⁷ Ա. Ղազարյան, նշվ. աշխ., լ. 9 56:

¹⁸ Ն. Պողարյան, Մայր Ցուցակ մնացքրաց Սրբոց Յակոբինաց, հ. Զ, Երուսաղեմ, 1972, լ. 91-93: Այսուհետի Ցուցակ Երուսաղեմի:

արդեն պատաճի չեր, նա ղեկավարում էր Մշո Առաքելոց վանքի գրչակենտրոնի ընդօրինակությունների սրբագրման բարդ և խիստ կարևոր աշխատանքը և հճաք էլ էր իրեն համարում «հետևող և աշակերտ... Ներսէսի»¹⁹:

Ի՞նչ բովանդակության են եղել այդ ձեռագրերը, որ Ներսես Վարդապետը Բարսեղին նամակով խնդրել է օրինակել, և Հովհաննես բարունին է բերել դրանք Մշո Ս. Առաքելոց վանք, դժվար է ասել: Սակայն այս հիշատակարանից իմանում ենք, որ Հայոց Վարդապետարանը Ներսես Մշեցու ղեկավարությամբ դեռ Տարոնի Թարգմանչաց կամ Եղիազարու վանքում էր: Եվ մի քանի ամիս հետո քաղաքական անքարենապատ պայմանները ստիպում են Վարդապետին իր աշակերտ Եսայի Նշեցու հետ մոտ մեկ տարի շրջել Քաջքերություն և միայն 1282 թվականի գարնանը հաստատվել Վայոց ձորի Աղբերց-Գլածոր վանքում²⁰:

14-րդ դարում ևս շարունակվում է վանքի դպրական գործունեությունը: Առաքել, Բարսեղ, Ստեփանոս, Հովհաննես գրիչները բազմաթիվ ընդօրինակություններ են կատարել: Դրանցից միայն Առաքել գրչի երկու ձեռագիրն է հասել, մնացյալները միայն ձեռագրերի հայությունը են պահպանվել պահանջման մեջ, և այդ ձեռագրերի ճակատագրերն առաջմտ անհայտ են:

1309 թ. Մշո Ս. Ղազարի վանքում ավարտվում է մի Ավետարան, որի գրչի անունը եղծվել էր²¹:

Ծարունակող անքարի ժամանակներում Առաքել գրիչը «կենաւք տուայտանաք» ավարտել է մի Ավետարան. «... ի թուականութիւնն Հայոց ԶԿԱ (1312), ի զաւարի Տարանոյ, ի հոյակապ և հոչակատր ովատիս և ի հրեշտակացոյց մենաստանին Ղազարու վանք կոչեցեալ, ընդ հովաննեաւ Սուրբ Առաքելոց»:

Ընդօրինակելիս գրչին օգնել են Հովհաննես և Ներսես գրիչները: Հովհաննեսը գրել է զյանազարդերը, Ներսեսը՝ նախադրությունները: Նկարազարդումը ավարտվել է Կիլիկիայում: Սարգիս քահանան նկարել է տվել չորս ավետարանիչների պատկերները: Նկարազարդ է ենթարկ Ս. Առաքելոց վանք է բերել Կարապետ քահանան: Մատթեոսի Ավետարանի նախադրության վերջում, Ներսեսի հիշատակագրությունից հետո, այդ մասին ասվում է. «...զՍարգիս քահանա... որ զաւարանիչներն են նկարել ի Կիլիկէ և յղարկեաց: Եւ բերող պատկերաց զԿարապետ վանական քահանան. ամէն» (9ա)²²:

Ներսես կրոնավորը ստամում է այս ամգին ձեռագիրը և նվիրում Սուրբ Առաքելոց վանքին ի հիշատակ հորը՝ Շահնշահին, և մորը՝ Տիկնացին²³:

Նոր Զուղապի Ամենափրկիչ վանքում է պահվում այս նույն գրչի մեկ այլ ընդօրինակու-

¹⁹ Մագիստրադարան, ծնո. 1097, լ. 6:

²⁰ Ս. Արևշապյան, Ա. Մաթենսյան, Եղվ. աշխ., լ. 11-12:

²¹ Ս. Մուրադյան, Պ. Մարտիրոսյան, Ցուցակ ծնուազրաց Մշո Սուրբ Առաքելոց թարգմանչաց վանքի և շրջակայից, Երևանալ, 1967, 16: Այսուհետև՝ Ցուցակ ծնուազրաց Սուրբ Առաքելոց վանքի:

²² Ն. Պողաբյան, Ցուցակ Երուսաղեմի, հ. Զ, լ. 510-511: Պողաբյանը նկարազարդում համարում է Սարգիս Դիմակի գործը, լ. 510:

²³ Նոյն վրայում: Ձեռագիրը 1386 թ. բազմաթիվ փորձությունների միջով անցնելով՝ վեղափոխվում է: Երուսաղման և գրիմու Մերոց Հակոբյանց վանքին:

թյուն: Այս Ավետարանը նույնպես գրված է բոլորգով, ոմի համարքաբաներ և նախադրություններ: Նկարազարդ է: Վարժ գրիչ է Առաքելը, Զա քաջածանոթ է Ավետարաններին, ուստի նկատում է զաղափար օրինակի բացթողումները: Հովհաննեսի Ավետարանի նախադրության վերջում գրում է: «Այս առաջ պիտի որ գրուէր, քան լիշտավաճ և չկայր յարինակն»: Սուրբ Առաքելոցի հովանու տակ Առաքել գրիչը ավարտում է իր հերթական ձեռագիրը Թումա քահանայի համար «Ի թուի Հայոց ԶԿԳ(1314)»²⁴:

Առաքել գրիչը Մանուկ քահանայի համար 1315 թ. Եղիազարու վանքում ընդօրինակում է մի ուրիշ Ավետարան: Ավարտելով այն, գրիչը անօրենների հարձակումներից փախչելով զնում է Տփիհս՝ ձեռագիրը տանելով իր հետ²⁵:

Մեկ տարի անց Առաքելը նորից Մշո Առաքելոց վանքում է և այստեղ ընդօրինակել է մի Ավետարան, միաբան Թաղենոս կրոնավորի համար²⁶:

1320 թ. Տարոնի Ս. Առաքելոց վանքում պահվող Առաքել կրոնավորի ընտիր օրինակից է գրվել Հովհաննես զրի Ծաշոցը²⁷: Այս նոյն թվականին Բարսեղ գրիչը ընդօրինակել է մի Մաշտոց²⁸: Ծաշոցի գրիչ Հովհաննեսը Խաչիկ քահանայի պատվերով արտագրում է մի Ավետարան «Ի թվին ԶԿԳ(1324)»²⁹:

Վասպուրականի Զուլամերիկի Փոկան զույրում է պահվել 1339 թ. Տարոնի Ս. Ղազար վանքում ընդօրինակված մի Ավետարան: Գրիչը Ստեփանոսն է: «Արդ, աղաջեմք զամնենեան, որք աւգուիք ի ամանէ, լիշեսչիք զզգծող սորա. զուտանուն կրաւառոր զՍտեփանոս, որ զայս մազաղաթս ի շահ ածի»: Հնդօրինակման հետ գրիչը հաղթահարել է լուրջ դժվարություններ: Գերության մեջ եղած նախկին Ավետարանից ոչինչ չէր մնացել, «... թումա-թումա էր արած, ես լուացի, զինքս, ու շատ աշխատեցայ»: Լվացված մազաղաթի վրա ընդօրինակելը դժվար է, և շատ հմտություն և շանքեր է պահանջում արտագոյնից, որ թաճաքը չտարածվի ու մյուս կողմը չանցնի: «Ըզգիրն դժուար կու առնե՞ր», - բողոքում է գրիչը³⁰:

Միաբանները և առանձին անհատներ շարունակում են հարստացնել վանքի Մատենադարանը: Ներսես վարդապետը մի Աստվածաշունչ է ստանում³¹: Մարտիրոս քահանան 1362 թ. Ամիթում ստանում է մի Ավետարան, որը Մարտիրոս քահանայի որդի Ստեփանոսը նվիրում է Ս. Առաքելոց վանքին³²:

1371 թ. թշնամին ավերում է Մշո դաշտը: Տարաշխարիկն են դառնում և Ս. Ղազարի միաբանները: Փախուատից առաջ միաբանները եկեղեցում եղած այլ մասունքների հետ միասին շատ մատյաններ են թաքցրել: Դրանց մի մասը փշացել ու եղծվել են: Նման ձե-

²⁴ Լ. Ավետիսյան, Ցուցակ հայերև ներազրաց Նոր Զույրայի Ամսնափրկիչ վանքի, Վինենա, 1970, լ. 63-64:

²⁵ Ցուցակ ներազրաց Առաքելոց վանքի, լ. 20-21:

²⁶ Ալոյ, լ. 21:

²⁷ Մագիստրատուս, ձևո. 7451: Նմֆ. ԺԴ դարի հիշապահաններ, լ. 164:

²⁸ Ռ. Ռուբան, Եղվ. աշխ., լ. 54:

²⁹ Նոյն փեղում, լ. 55:

³⁰ ԺԴ դարի հիշապահաններ, լ. 321:

³¹ Բ. Մարգիսյան, Մայր ցուցակ հայերև ներազրաց ի Մագիստրատուսին Միջինարևելանց ի Վենետիկ, հ. Ա. Վենետիկի, 1914, լ. 126-127:

³² Ցուցակ ներազրաց Սուրբ Առաքելոց վանքի, լ. 28:

ուազրերից մեկը՝ մի Աստվածաշունչ, այս դեպքերից յոթ տարի անց նորոգվել է Պողոս Կրոնավորի միջոցներով³³:

Լեռնկթեմուրյան մասի սփոռող արշավաճրերի պատմությունը շարադրելիս Թովմա Մեծովին հաջում է Մշում կատարված դեպքերի մասին տեղեկությունների հավաստիությունը հաստատելու համար լուս է նաև ականատես, Մշում Սուրբ Առաքելոց վանքի համբավավոր ճգնավորիմ՝ Բարթողիմեոսիմ³⁴:

15-րդ դարը և Հայաստան աշխարհի համար անապահով մի ժամանակաշրջան էր: Խորասանի տիրակալ Շահումիսի արյունավի արշավաճրերը ևս հայկական լեռնաշխարհում են ընթացել: Սակայն Մշում Եղիազարու միարանությունը շարունակում է գործել: Վանքի պատերի մերսում վանականները ձեռագրեր են ընդօրինակել, նորոգել և գնել:

Բարսեղ, Ղազար և Կարապետ գրիչները ընդօրինակում են մի ժողովածու Բարսեղ վարդապետի համար: Ձեռագիրն այժմ պահպում է Մաշտոցի անվան Մատենադարանում և կրում է 2690 համարը: Մավլուն այս ձեռագիրը (386 թերթ) բովանդակում է Հովհան Ռոկերեանի, Եփրեմ Խորին Ասորու, Վանական վարդապետի, Վարդան Արևելցու և Գեվորգ Սկեռացու մեկնությունները:

Գրիչներն ընդօրինակությունն ավարտում են «...ի Մեծ թուականիս Հայոց ՊԿԸ(1418) ի դրուն Երկուտասան Սուրբ Առաքելոց Եղիազարու վանաց»: Ուսումնական ձեռնարկը Բարսեղ ստացողը նվիրում է իր ուսուցչին՝ «քաջ հոեստորի՛՛ Սիրապիոն րարունապետին»:

Մեկ տարի անց, ժողովածուն նկարազարդում և միաժամանակ կազմում է Հովհաննեսը: Գեղեցիկ լուսանցագարդեր, կիսախորաններ ունի ձեռագիրը: Բացի դրանից, մանրանկարիչը արել է մեկ տերունական և Եփրեմ Խորին Ասորու և Հովհան Ռոկերեանի պատկերներով նկարները³⁵:

Մշում Սուրբ Առաքելոց վանքում Գրիգոր Խլաթեցու աշակերտ Առաքել Բաղիշեցին ուսուցչի մահից հետո գրում է Օրան նվիրված «Գովասանութիւնը», 1422 թվականին, որի սկզբի մի հատվածը մտել է «Հայսմավորքի» մեջ³⁶:

1439 թ. Հայրապետ գրիչը վերատին նորոգում է ցեցակեր, թուղթը բամբակ դարձած մի Աստվածաշունչ, «... հազի կարացի ի կապ ածել», - ասում է հմտու գրիչը:

Մշում Առաքելոց վանքում պահպում էր Ավետարանի մի ընտիր օրինակ, որ բերվել էր Կիլիկիայից: Դա 1301 թ. Դրազարկում կատարված Հովհաննես Արորեցի և Թորոս փիլիստիվակի ընդօրինակությունն է, որը գրիչները նվիրել են Մշում Առաքելոց վանքի առաջնորդ Աքրանամիմ³⁷: Այս օրինակից են կատարված Բաղեշի 1450 թ., ինչպես նաև Մուշում ընդօրինակված 1453 թ. ձեռագրերը³⁸:

³³ Նոյն վկանում, լ. 127-128:

³⁴ Թովմա Մեծովինեցի, Պարմագրություն, աշխաբակիրությամբ Լ. Խաչիկյանի, Երևան, 1999, լ. 32-33:

³⁵ ԺԵ դարի հայերն ծնուազրերի հիշաբակարտաներ, մ. Ա. կազմեց Լ. Խաչիկյան, Երևան, 1955, լ. 350: Հմմը. Մագնեսադարան, ձև. 2690, լ. 326:

³⁶ ԺԵ դարի հիշաբակարտաներ, 293, ծթ. 1:

³⁷ Ցուցակ ծնուազրաց Սուրբ Առաքելոց վանքի, լ. 41:

³⁸ Նոյն վկանում, լ. 649: ԺԵ դարի հայերն ծնուազրերի հիշաբակարտաներ, մ. Ա. կազմեց Լ. Խաչիկյան, Երևան, 1958, լ. 33:

Մշում միաբան Անդրեաս քահանան 1464 թ. ընդօրինակել է մի Ավետարան, որը ունեցել է գեղեցիկ նկարազարդում: Ձեռագրում եղել են առև 20 տերունական պատկերներ³⁹:

1468 թ. Թավորիզից Զահանջա խանը գործով շարժվում է Ամիր: Եվ մինչև Խորասան մարտ գործերը ճանապարհին ավերում են ամեն ինչ, բնակչությունը փախուստի է դիմում: «Եւ եկեալ ենիս ի գաւառն Տարանոյ, ի Դաշտն Մշոյ, և անդ բազում աւերս արարին բարարն առոր, զի բազում էին և անհամար... Եւ դիմեցին ի վանքն Ղազարու և զլուսարարն սխորովեցին ի կրակն և նահատակին», - ցավով գրում է ականատես Մկրտիչ գրիշը⁴⁰:

Իրար հաջորդող մահ սփոռ պատերազմները ընդհատում, բայց չեն դադարեցնում յամաքի գործունեությունը: Միաբաններն ապրում են իրենց կյանքով, աղոթում են, կարդում և գրում, ինչպես նաև նորոգում թաքսոնցներում վատ պայմաններում պահված և վնասված ձեռագրերը:

Հայտնի գրիչ-կազմող Կարապետն Բաղիշեցին Եղիա և Թորոս արքեպիսկոպոս առաջ-նորդների պատվերով Եղիազարի վանքում նորոգում է մի Ավետարան. «Քանի որ զի լոյժ թիմացեալ էր կապն, և էր առանց արծարոյ և ամտես և անվայելուչ...»:

Կազմի համար Կարապետին արծաթ են տախին Զիչաք և Ուռումսշեն «համեստ կամայք»: Նորոգման աշխատանքները ավարտվում են «ի վերջին դարիս և յետնում ժամանակիս... լորում է թվականութիւն մեր ԶիւԵ (1496)»⁴¹:

Բացի ձեռագրերի ընդօրինակությունից, միաբանների և ամիատների միջոցներով շարունակվում է հարստանալ տեղի Մատենադարանը: Դանիել կրոնավորը 1401 թ. մի Մաշտոց է նվիրում, 1408 թ. Դավիթ Եպիսկոպոս Ղիմեցին՝ 1325 թ. ընդօրինակված մի Ավետարան: Դավիթը ծագումով Մշեցի է, սարկավագ է եղել Մշո Առաքելոց վանքում: Հաստատվել է Կիլիկիայում, ձեռնադրովել: Արդեն Եպիսկոպոս, Աշոտի գլուղում տեսանում է այս ձեռագիրը մի աշխարհական քահանայի մոտ: Եվ «ԺԶ (16) անգամ երթենեկ առնելով առ նա», մի կերպ գնում է Ավետարանն ու նվիրում Ս. Առաքելոցին: Ավետարանը ստանում է նվիրողի՝ «Ղիմի Ավետարան անվանումը»: 1496 թ. Ավետարանը նորոգվում է⁴²:

16-րդ դարում վանքի հետագա գործունեությունը շարունակելու համար լուրջ դժվարություններ են առաջանում, և միջոցներ ձեռք բերելու համար միաբանության անդամները 1517 թվականին հանգանակություններ են կատարում Ամիթում⁴³:

Մշո Առաքելոց վանքում այս տարիներին փայլում էին երկու հոնտորներ՝ Թորոս և Ղազար բարունիները: Այս շրջանի առաջին ընդօրինակությունը Ղազար գրչի ձեռքով է յատարված: Գրիշը ուսանել է Սուրբ Առաքելոց վանքի դպրոցում, աշակերտել է Կիրակոս կրոնավորին և Ղազար բարունուն: Ավետարանը գրվել է 1505 թ. Կիրակոս քահանայի համար⁴⁴: Այն 20 տերունական պատկերներ ունեցող նկարազարդ մատյան է եղել:

³⁹ Ցուցակ ձեռագրաց Սուրբ Առաքելոց վանքի, լ. 41:

⁴⁰ ԺԵ դարի հիշաբակարաններ, մ. Բ, լ. 271:

⁴¹ Հայերն ձեռագրերի հիշաբակարաններ, ԺԵ դար, մ. Գ, կազմնց Լ. Խաչիկյան, Երևան, 1967, լ. 232:

⁴² Ցուցակ ձեռագրաց Սուրբ Առաքելոց վանքի, լ. 21: Վյժմ ձեռագրի ճակարպահին-անհայլ լ:

⁴³ Բ. Սարգսյան, Մայր Ցուցակ Հայերն ձեռագրաց մատքեսադարանին Միջիարևանց ի Վեննիկի, հ. Բ, Աննակի, 1924 լ. 480-481:

⁴⁴ Ցուցակ ձեռագրաց Սուրբ Առաքելոց վանքի, լ. 49:

1554 թ. այս հմուտ գրիչը ընդօրինակել է մի Գամձարան⁴⁵. Այս տարիներին են ընդօրինակվել Կարապետ Բաղիշեցու «Հայսմավորք» (1526 թ.) և 1521 թ.՝ մի Ավետարան:

Այստեղ է ավարտվում նաև Ամիթում Ավագած Աստվածատոր Ամիթեցու Սահմոսարանը՝ 1547 թ.: Հովհաննես Գառնեցու խմբազրած ընտիր օրինակից արված այս ընդօրինակությունը կատարվել է Թադեոս արքեպիսկոպոսի պատվերով: Թադեոսը չի կարողանում գմել ձեռագիրը, քանի որ «ի Քրիստոս հանգուեալ» եր: Այդ անում է Կարապետ Խափիսկոպոսը ու Ավիրում Մշո Սուրբ Առաքելոց վաճքին: Գրչին ընդօրինակելիս օգնել է Կողը 1570 թվականին, Ավետին քահանայի պատվերով⁴⁶:

Այս նույն գրիչը 1509 թ. Դավիթ Եախսկոպոսի համար Ամիթում ընդօրինակում և ծաղկում է «ուկով և լաճակարտով և ակամք պատուականօք» մի Աստվածաշունչ: Դավիթ Եախսկոպոս տալիս է այն «ի Վաճառ Ղազար, որ է ի Տարան, ի Լեռն Տիրոսի, որ է Մշո Սուրբ Առաքելոց»: Գեղեցիկ Ակարազարդում է ունեցել այս ձեռագիրը: 30 տերումական պատկերներից բացի, եղել են բազմաթիվ լուսանցազարդեր և պատկերներ: Հինգ տարի անց Դավիթ Եախսկոպոսը իր Ավիրած ձեռագիրը զարդարել է արծաթե կազմով. «Զատացող Սուրբ Աւետարանին զ Ռամիթ Եախսկոպոս լիշեցել ի Քրիստոս, որ ես արծաթել զԱւետարան Ուսի Դ(1595)» արձանագրությամբ⁴⁷:

Աստվածատոր Ամիթեցու աշակերտ Սիմոն սարկավագը 1588 թ. Ամիթում ընդօրինակել և Ակարազարդել է տալիս մի Ավետարան և ինքն էլ կազմում է այն ու Ավիրում Մշո Սուրբ Առաքելոց վաճքին⁴⁸:

Ամիթ-Տիգրանակերտի գրչության կենտրոնի հետ այս վաճքի համագործակցությունը, որ սկսել էր 14-րդ դարից, շարունակվում է ոչ միայն այս, այլև հաջորդ դարերում:

Մշո Առաքելոց վաճքի շատ միաբաններ իրենց ուսման թերին լրացրել են Ամիթի միաբանության դպրոցում, աշակերտել են այստեղ հայտնի բարունակետ Սիրապիոն Ուռիալցուն (17-րդ դ.): Ամիթում հայտնի Աստվածատոր, Սահակ գրիչներին ձեռագրեր են պատվիրել կամ Մշո Առաքելոց վաճքից այստեղ են բերվել ու նորոգվել ձեռագրեր:

Մշո Առաքելոց վաճքի սպասավորներից Բարսեղ Վարդապետը Արծրունի զյուղից էր, սովորել էր Ամիթում: Իր ուսուցչը՝ Սիրապիոն բարունակետի մահից հետո ստանձնել է տեղի վաճքի վաճառայրությունը և միաժամանակ Ս. Առաքելոց վաճքի վերատեսչն էր⁴⁹:

Բարսեղ Վարդապետը Լվովում տեսնում է մի 1401 թ. ընդօրինակության Նարեկի անմիթար Վիճակը ու նորոգել է տալիս Խաչատոր Կրոնավորի միջոցներով 1605 թ: Նարեկը Անդրեասը, գրիչը նորոգելուց հետո, նաև կազմում է⁵⁰:

⁴⁵ Յուղակ ձևագրաց Սուրբ Առաքելոց վաճքի, լ. 48-49, 52:

⁴⁶ Նոյն գլուխում, լ. 50-51:

⁴⁷ Նոյն գլուխում, լ. 56-57:

⁴⁸ Նոյն գլուխում, լ. 56-57:

⁴⁹ Հայերն ձևագրերի հիշապակարաններ, ԺԷ դ., մ. Բ, կազմնց Վ Հակոբյան, Երևան, 1978, լ. 499: Այսինքն՝ ԺԷ դարի հիշապակարաններ:

⁵⁰ Մաքրևսաղարան, ձև. 3863, լ. 319թ: Նմք. ԺԷ դարի Հայերն ձևագրերի հիշապակարաններ, մ. Ա, ԺԷ դ. դ.

1609 թ. Բարսեղ Վարդապետը նորոգում է սուրբ ուխտը. «զպարհսան բարձրացոյց, զեկնեցոյ խախտեալքը զամբան շինեաց»: Սակայն շատ չանցած պարսիկները ասպատակում են Տարոնը, տարագովում են նաև միաբանության անդամները: Հարաբերական դադարի պայմաններում միաբանության վաճառքարը Ամիրում նորոգել է տալիս Հորի և Հովհաննու մեկնությունները պարունակող մի ժողովածու և վերադարձնում է վաճառ 1610 թ.⁵¹:

Ծինարար միաբանության վաճառքայրը հարստացնում է նաև տեղի մատենադարանը: 1622 թ. զնում է Գրիգոր Տաթևացու Հարցմանց գիրքը և Ավիրում Մշո Սուրբ Առաքելոց վաճին⁵²: Բարսեղ Վարդապետը Երուսաղեմ այցելության ժամանակ, 1632 թ., Սուրբ Հակոբ և Սուրբ Հարություն եկեղեցիներին նվիրում է մի Աստվածաշունչ⁵³:

Վաճին սեփականությունն է յատնում նաև Մելքոն գրչի 1617 թ. Ամիրում Պողոս խոչայի պատվերով ընդօրինակված Ավետարանը: Պողոս խոչան, «որ էր ի յերկրէն Տարաւանոյ, որ Մուշ կոչի, ի գեղջէն Յորկնոցու», Ավիրելով ձեռագիրը, նորոգում է միաբաններին. «Հաւ պահէք զուրբ Աւետարանս ի ջրոյ և ի հրոյ և գէշ տեղապահութեան և ի տղիտաց կամ մանկանքարձ, տիմարաց ձեռու չտայք: Զլուսանցն և զծաղիկսն կամ զպատկերան և կամ աւելի՝ զիր խազխազեն, կամ թուփ ու պատկեր կտրեն, կամ անզիտարար բենելով զիսաչն ի վերայ զթուրին ծակծակեն, այլ ամենայն դիմաւք լաւ և պատրաստութեամբ պահնեցէք»⁵⁴:

Կարապետ գրիչը տեսնելով վաճքում պահվող մի նարեկի անմիջաբար վիճակը «զաստուածախօս զիրս փունալ և ապականեալ, զոր ոչ լիշատակ կայր, ոչ թուական և ոչ գրողի և ատացողի անուն», վերստին նորոգում է այն «ի թուականին Հայոց Ռ և ՋԱ. (1632)»⁵⁵:

Դավիթ քահանայի համար Կարապետ եպիսկոպոսը ընդօրինակում է մազադաթյա Սաղմոսարան Հովհաննես Գառնեցու խմբագրած ընտիր օրիմակից և Ակարազարդում է այն «... ի թուականութեան Հայոց ՌՋԱ. (1636)... ի դուռն Եղիազարու վաճուցն, ընդ հովանեա Սուրբ Աստուածածնին և Երկուտասան Առաքելոցն և Սուրբ Լուսաւորչի»⁵⁶:

Մշո Ս. Առաքելոց վաճքում պահվող ձեռագիրից մնում եղած 1637 թ. իշշատակարանում երեք այլ ձեռագրերի նորոգման մասին տեղեկություն է պահպանվել: Վաճին առաջնորդ Հովհաննեսը իր աշակերտ Մարգարի Բետ «Գործք Առաքելոց, Երգ Երգոց Մեկնութիւն և մի Աւետարան» է փրկում վճասվելուց⁵⁷:

Սուրբ Եղիազարի վաճքում պահվող Դավիթ Աճիայի Սահմանքն ու Եսայի Նչեցու Քերականությունը պարունակող ժողովածուն բավականին քայլայված վիճակում էր: Ուսումնական ձեռնարկ հանդիսացող այս ձեռագիրը Հովհաննես րաբունին տալիս է Դամիել արեղային նորոգելու: 1644 թ. խստ դժվարությամբ նորոգվում է ձեռագիրը և հանձնվում պատվիրատուին: Հիշատակարանում մեկ առ մեկ հիշվում են առավել հայտնի մի-

⁵¹ ԺԷ դարի հիշատակարաններ, մ. Ա, լ. 390:

⁵² ԺԷ դարի հիշատակարաններ, մ. Բ, լ. 24-25:

⁵³ Նոյն փեղում, լ. 499:

⁵⁴ Ցուցակ ծնուազրաց Սուրբ Առաքելոց վաճին, լ. 61-62:

⁵⁵ Նոյն փեղում, լ. 68:

⁵⁶ Նոյն փեղում, լ. 161-162:

⁵⁷ Դ. Ուկյան, նշվ. աշխ., լ. 83:

արանձերը՝ Կարապետ Վարդապետը. Ավետիսը, երաժիշտ Մարգարը և Հովհաննեսի աշակերտներ Տեր Առաքելը և Տեր Խաչանուրը⁵⁸:

20 տարի Երուաղեմում սպասավորած Դամիել աբեղան մի որոշ ժամանակ հանգրվացել է Մշո Սուրբ Առաքելոց վանքում: Հովհաննես րաբունապետի առաջնորդության տարիներին նա վաճի մատենադարանին է Ավիրում Գրիգոր Տաթևացու «Հարցմանց զիրքը» և ընդօրինակում մի մագաղաթյա Ավետարան, Ակարազարդում, կազմում և նորից տալիս է ի պահ վաճրին «... ի թվին Ռ'ՂԳ (1644)»⁵⁹:

Դամիել աբեղան 1654 թ. նորոգում է զրադաշտը գումափիլսված մի Ավետարան⁶⁰: Դավիթ կրոնավոր վանքում պահվող Դավիթ Ղիմեցու Ավետարանը երրորդ անգամ բերում է նորոգելու, քանի որ «զան զիրն յոյժ թուուցեալ էր, որ ի կարդալ չեր հզար»: Նոյն Դամիել կազմողը ավարտում է նորոգումը «... ի թվին Հայոց Ռ'ՂԵ (1646)»⁶¹:

Հովհաննես րաբունին ոչ միայն նորոգել է տալիս, այլև գնում է ու Ավիրում ձեռագրեր: «Վերատեսուչ իր վիճակին, որ Տարօնոյ Դաշտ ասին և Ղազարու վաճք լորջորջին...» Հովհաննեսի պատվերով Ամիթում Խաչատուր գրիշը ընդօրինակում է մի Աստվածաշունչ: Ստացողի այս հիշատակարանի միայն ժամանակն է հայտնի: Տեղը ամենայն այս հիշատակարանում նոյն երաժիշտ Մարգարն է, նոյն Ավետիսը, նոյն Հովհաննեսի աշակերտները՝ Խաչատուրն ու Առաքելը, ինչ 1644 թ. Դամիել աբեղային տեղը հատնի հիշատակարանի միաբանների անունները: Նման կրկնույթունը ենթադրել է տալիս, որ այս Աստվածաշունչն ևս Ավիրում է Սուրբ Առաքելոց վաճրին⁶²:

Դարավերջին վաճի առաջնորդ Վարդան Բաղիշեցու պատերով 1296 թ. Քաջերունիքում ընդօրինակված և 1361 թ. Դամիել կրոնավորի կողմից վաճրին Ավիրված Մաշտոցը նորոգում է Սահմակ Վանեցին: 1671 թ. ձեռագրի հիշատակարանից իմանում ենք, որ հմտությունը գրիշ կազմարարը նորոգել է ևս 30 ձեռագիր⁶³:

Երկու տարի անց Առաքելոց վաճրում Սահմակ Վանեցին ընդօրինակում է մի Ավետարան, որը նաև Ակարազարդ է: Ավետարանիների ավանդական Ակարաներից և ավետարանառաջնորդից զատ ձեռագրում կան նաև 8 տերունական պատկերներ: Մինչև Մեծ Եղեռնը այն պահվել է Մշո Փիրաշեն գյուղում: Այժմ պահվում է Մաշտոցի անվագ Մատենադարանում (ձեռ. 8975): Հիշատակարանից իմանում ենք, որ Վանեցին որդին է Ամիրշահի և Զինարի, ինչպես նաև Զա հնքն է Ակարազարդել մատյանը: Վանեցին միաբանության անդամ չէ, պահանջանական պատկերները և ընդօրինակելու և նորոգելու: «... նատոյց ի վաճս Ղազարու և նորին ԽԴ(44) զիրք վերստին ետ կազմել և նորոգել»: Արագազիր է Սահմակ գրիշը: Մեկ ամսից էլ քիչ ժամանակում նա ավարտում է իր ձեռագիրը «...յերկիրն Տարանոյ, որ այժմ Մուշ կոչի, ի վաճս Եղիազարու,

⁵⁸ Ցուցակ ձևագրաց Սուրբ Առաքելոց վաճրի, լ. 18:

⁵⁹ Նոյն գլուխում, լ. 67-68:

⁶⁰ Նոյն գլուխում, լ. 71:

⁶¹ Նոյն գլուխում:

⁶² Հայերևն ձևագրերի հիշատակարաններ, ԺԷ հ., մ. Գ, կազմնեց Վ. Հակոբյան, Երևան, 1984, 237-238:

⁶³ Ցուցակ ձևագրաց Սուրբ Առաքելոց վաճրի, լ. 12:

ի դուռն Երկուտասան Առաքելոցն... ի թվին Հայոց Ռմիթ (1673)»⁶⁴:

18-րդ դարի ընդամենը մի ձեռագիր ընդօրինակման մասին վկայություն կա, որը 1714 թ. Հակոբ քահանայի գրած մի Մաշտոցն է⁶⁵:

Մշտ Ս. Առաքելոց վաճրի գրչական գրիծումնեության մեր վկայությունները սկսվում են 13-րդ դարի 70-ական թվականներից և գրեթե առանց ընդմիջման շարունակվում են շուրջ հինգ դար: Երկու տասնյակից ավելի գրիչները ամենօրյա գրչական աշխատանք են կատարել, և ճայուրավոր ձեռագրեր պետք է լինենին ոչ միայն Մաշտոցի անվան Մատենադարանում, այլև աշխարհի հայտնի հայերեն ձեռագրական հավաքածուներում: Մինչև Մեծ Եղեռնը կազմվել է Մշտ Ս. Առաքելոց վաճրի և նրա շրջակարությունը պահպող ձեռագրերի ցուցակը: Հստ կազմողների, պահպող ձեռագրերը եղել են 156-ը: Վանքում պահպող ձեռագրերը 126 են եղել, որոնցից 90-ը ունեցել են հիշատակարաններ: Տեղում գրվածները 9 են⁶⁶: Մեզ են հասել ընդամենը 13 ձեռագիր, որոնց մեծ մասը պահպում են Մաշտոցի անվան Մատենադարանում, մեկը՝ Երոսաղեմում, մեկն էլ Նոր Ջուղայի Ամենափրկիչ վաճրում:

Եղեռնի ժամանակ Մշտ դաշտում ամենից ավելի տուժել է այս վանքը, քանի որ Արա միաբանները գործուն մասնակցություն են ունեցել ինքնապաշտպանական մարտերին: 1916 թ. Գևորգ Կաթողիկոսի հրամանով ստեղծվում է հատուկ հանձնաժողով՝ Մշտ Սուրբ Առաքելոց և Սուրբ Կարապետ վանքերի թաքցված ժառանգությունը գտնելու և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տեղափոխելու համար: Հանձնաժողովը դատարկված է գտնում Սուրբ Առաքելոցի թաքստոցները և գրեթե դատարկածեն վերադառնում Մայր Աթոռ: Ամբողջ Մուշի տարածքից բերվում է 99 ձեռագիր: 1938 թ. Թիֆլիսի Ազգագրական ընկերությունից ստացվում է երեք այլ ձեռագրեր, որոնցից մեկը՝ Մշտ հոչակավոր Շաղընտիրն է⁶⁷:

Մշտ Առաքելոց վաճքն այսօր վերածվել է ավերակի, և Արա երբեմնի շեն կյանքի միակ վկան, զոյությունը հաստատող միակ վկայությունը այսօր մնում են այնտեղից մեզ հասած ձեռագրերը, ինչպես նաև հիշատակարանային տվյալներ պարունակող Ցուցակը:

⁶⁴ Ցուցակ ձեռագրաց Սուրբ Վատիկաց վանքի, լ. 176, Մագրենադարան, ձևո. 8975:

⁶⁵ Հ. Ոսկյան, Խշվ. աշխ., լ. 83:

⁶⁶ Ցուցակ ձեռագրաց Սուրբ Վատիկաց վանքի:

⁶⁷ Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մագրենադարանի (համառող), հ. Ա, Երևան, 1965: Օ. Եղանյան, Մագրենադարանի ձեռագրական հավաքածուները, լ. 106: